

- 13 Ընդ նմին եւ զայլ գիտութիւնս փորձէր ,  
Ատենարանից նմանիլ ձկտէր ,  
Զիմաստասիրաց քաջ առածս ընտրէր ,  
Զորոց բան խրթին հանճարով մեկներ :
- 14 Սոյնպէս հրահանգեալ Սոփեստ երեւէր ,  
Յաջս մի մի մարդոյ որ ըզնա գիտէր ,  
Որոց բերան իսկ ըզնա դրուատէր ,  
Յականջս ամբոխին հռչակ հարկանէր :
- 15 Յայնժամ Պատրիարզն որ վարդապետն էր ,  
Զաշակերտն իւր զոր քաջ մարզեալն էր ,  
Համայն զննութեամբ եւ հարցմամբ փորձէր ,  
Վարդապետութեան արժան գտանէր :
- 16 Վասն որոյ ըզհետ մի տարւոյ իբրու  
Մի ըզհետ միոյ Սարգիս մեր հասու  
Փոքր եւ ծայրագոյն դաւազան առնու ,  
Ի վարդապետէն իւրմէ Յօհաննու :
- 17 Որ եւ իսկ եւ իսկ ըզտեղի կայնու ,  
Յատեան քարոզչաց Կոստանդուպօլսու ,  
Անզոյգ հանճարով եւ բանիւ ազգու  
'Ի իւր ճարտար լեզուաւ լինի խրատուու :
- 18 Նա մոլխսիրաց էր ազգիչ ձայնաու ,  
Եւ առաքինեաց ներբողիչ լեզու ,  
Ուղղասէր անձանց յաջող ձեռբաձու ,  
Ազանդաւորաց փաստիւ ահարկու :
- 19 Քանզի ուսեալն էր բարւոք առաջու ,  
Վստահ բարբառիլ ոչ գոլ ակնառու ,  
Սրտեղ գոյանալ եւ ոչ ակնածու ,  
Սաստ վատաց լինել լաւաց հոգածու :